



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝  
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Թ. 11

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝  
ՌԵԿՏՈՐ՝ Հ. ԶԱՔՈՅԱՆ

«16» մայիսի 2025 թ.

«16» մայիսի 2025 թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 071601.00.6 Տրանսպորտային համակարգեր  
Կրթական ծրագիր՝ 071601.05.6 Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր  
Որակավորում՝ Ճարտարագիտության բակալավր

Երևան 2025

<b>Բովանդակություն</b>	
1.	Ծրագրի ընդհանուր բնութագիրը
2.	Ծրագրի նպատակը
3.	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները
4.	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները
5.	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները
6.	Ծրագրի կառուցվածքը
7.	Դասավանդման և ուսումնառության մեթոդները
8.	Գնահատման մեթոդները
9.	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան
10.	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները
11.	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ
12.	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ
	Հավելվածներ
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)

<b>1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը</b>	
<b>Ֆակուլտետ</b>	«Ագրարային ճարտարագիտության»
<b>Ամբիոն</b>	«Ավտոտրակտորների և գյուղմեքենաների»
<b>Ոլորտ/ Միջոլորտային բնագավառ</b>	0716 Ցամաքային և օդային փոխադրամիջոցներ
<b>Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը</b>	071601.00.6 Տրանսպորտային համակարգեր
<b>Մասնագիտության կրթական ծրագիր</b>	071601.03.6 Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր
<b>ՄԿԾ պատասխանատու/-ներ</b>	«Ավտոտրակտորների և գյուղմեքենաների» ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Ա.Մ.Եսոյան
<b>Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)</b>	առկա և հեռակա

<b>Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)</b>		ճարտարագիտության բակալավր
<b>Ուսուցման լեզուն</b>		Հայերեն
<b>Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ</b>		Միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կրթություն
<b>Ուսուցման ընդհանուր տևողություն/ կրեդիտ</b>		4 տարի, 240 կրեդիտ
Որից՝	Լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	2315ժամ
	Ինքնուրույն աշխատանք	1920
	Քննաշրջան	24 շաբաթ
	Պրակտիկա	7-րդ կիսամյակ
	Անփոփոխ ատեստավորում	4 շաբաթ
	Արձակուրդ	46 շաբաթ

## 2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է պատրաստել տրանսպորտային փոխադրումների ոլորտի կազմակերպման և կառավարման լոգիստիկական գործիքակազմի կիրառման համար անհրժեշտ մասնագետներ, ում գիտելիքները, հմտությունները և կարողությունները կնպաստեն տեղական և միջազգային փոխադրումների արդյունավետության բարձրացմանը, ապահովելով շահագործման անվտանգությունը, նվազեցնելով շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը:

## 3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները

Նշել ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները (օրինակ, համատեղ է իրականացվում ինչ-որ արտասահմանյան համալսարանի հետ, երկակի դիպլոմ է տալիս, դուալ է և այլն):

Ուսանողները հնարավորություն կունենան արդեն ուսումնառության ընթացքում կիրառել ստացած գիտելիքները տրանսպորտային լոգիստիկայի բնագավառում:

Հայաստանը հանդիսանում է տրանսպորտային լոգիստիկ կենտրոն և հետագա կարիերայի հնարավորությունները մեծ են:

Դասավանդողների մի մասը ոլորտի ճանաչված մասնագետներ են կամ լուրջ հետազոտողներ:

## 4. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)

**Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա.**

ԸԿ1. Կիրառել ստացված փիլիսոփայական գիտելիքները, վերլուծել պատմական զարգացման հիմնական փուլերն ու օրինաչափությունները:

ԸԿ2. Ստացված տնտեսագիտական գիտելիքները կիրառել տարբեր ոլորտներում գործունեության արդյունքների արդյունավետությունը գնահատելու համար:

ԸԿ3. Հայերեն և օտար լեզուներով հաղորդակցվել գրավոր ու բանավոր՝ միջանձնային, միջ-մշակութային, մասնագիտական խնդիրները փոխհամագործության պայմաններում լուծելու

համար:

ԸԿ 4. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության և անձնական աճի նպատակով:

ԸԿ 5. Աշխատել թիմով՝ արդյունավետ շփվելով գործընկերների, ղեկավարության և սպառողների հետ, դրսևորելով հանդուրժողություն:

ԸԿ 6. Զբաղվել ինքնակրթությամբ, գիտակցված պլանավորելով մասնագիտական առաջընթացը:

ԸԿ 7. Կիրառել իրավաբանական գիտելիքները գործունեության տարբեր բնագավառներում ճիշտ կողմնորոշվելու համար:

ԸԿ 8. Կիրառել ստացված գիտելիքները առաջին օգնության, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու համար:

ԸԿ 9. Կողմնորոշվել մասնագիտական գործունեության ոլորտում՝ տեխնոլոգիաների հաճախ փոփոխման պայմաններում:

### **5. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)**

#### **ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը.**

**ՄԿ 1.** Իմանա բեռների տրանսպորտային հատկանիշները, փոխադրման և պահպանման ընթացքում դրանց հետ վարվելու կանոնները և փոխադրումների օպտիմալ կազմակերպատեխնոլոգիական սխեմաները:

**ՄԿ 2.** Իմանա ավտոտրանսպորտային շարժակազմերի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեսության հիմունքները: Տիրապետի ավտոմոբիլների, դրանց հանգույցների և ագրեգատների աշխատունակության ապահովման տեխնիկա-շահագործական նորմաներին:

**ՄԿ 3.** Կարողանա կիրառել լոգիստիկայի գործիքակազմը ավտոտրանսպորտային ձեռնարկության կառավարման համակարգում:

**ՄԿ 4.** Տիրապետի արտադրական պրոցեսների և տրանսպորտային հոսքերի մոդելավորման, պլանավորման և կառավարման սկզբունքներին:

**ՄԿ 5.** Տիրապետի ձեռնարկության հիմնական տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման մեթոդներին:

#### **ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի**

**ՄԿ 1 վերջնարդյունքներ** Իմանա բեռների տրանսպորտային հատկանիշները, փոխադրման և պահպանման ընթացքում դրանց հետ վարվելու կանոնները և փոխադրումների օպտիմալ կազմակերպատեխնոլոգիական սխեմաները

1.1	Կատարել տրանսպորտային գործունեության վերլուծություն:
1.2	Մշակել բեռների և ուղևորների տեղափոխման կազմակերպատեխնոլոգիական պլաններ և տարբերակներ:
1.3	Ներդնել ժամանակակից համակարգեր տրանսպորտալոգիստիկական կենտրոններում պահեստների մեքենայացման և ավտոմատացման համար՝ կազմակերպելով պահեստային տնտեսության օպտիմալ պլանավորումը և կառավարումը:

1.4	Տիրապետել հաղորդակցության կուլտուրային, պետական և օտար լեզվով հաղորդակցման հմտություններին:
<b>ՄԿ 2 վերջնարդյունքներ.</b> Իմանա ավտոտրանսպորտային շարժակազմերի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեսության հիմունքները: Տիրապետի ավտոմոբիլների, դրանց հանգույցների և ագրեգատների աշխատունակության ապահովման տեխնիկաշահագործական նորմաներին:	
2.1	Գնահատել տրանսպորտի տարբեր տեսակների աշխատանքը,
2.2	Հաշվել բեռնվածքները, մշակել դրանց համագործակցության տարբեր սխեմաները:
2.3	Գնահատել նյութերի, արտադրական տեխնոլոգիաների էկոլոգիական և էներգետիկական կայունությունը:
2.4	Մշակել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներ:
2.5	Մշակել աշխատանքի անվտանգության, կյանքի և առողջության պաշտպանության միջոցառումներ:
<b>ՄԿ 3 վերջնարդյունքներ</b> Կարողանա օգտագործել լոգիստիկայի գործիքակազմը ավտոտրանսպորտային ձեռնարկության կառավարման համակարգում:	
3.1	Կիրառել ինֆորմացիոն, համակարգչային տեխնոլոգիաները, տվյալների բազայի ծրագրային ապահովման, մասնագիտական գործունեության լոգիստիկական ինֆորմացիայի մշակման և օգտագործման համար:
3.2	Լուծել լոգիստիկական խնդիրներ:
3.3	Բացատրել տրանսպորտալոգիստիկական համակարգերի հետազոտման հասկացությունները և մոտեցումները:
3.4	Ներկայացնել լոգիստիկական համակարգերի հետազոտման հիմնական ինֆորմացիոն տեխնոլոգիաները:
3.5	Ցուցաբերել բավարար գիտելիքներ միջազգային և հանրապետական փոխադրումների ժամանակ տրանսպորտային գործունեության կարգավորման համար:
<b>ՄԿ 4. Վերջնարդյունքներ</b> Տիրապետի արտադրական պրոցեսների և տրանսպորտային հոսքերի մոդելավորման, պլանավորման և կառավարման սկզբունքներին	
4.1	Պլանավորել արտադրատնտեսական գործունեություն՝ հաշվի առնելով լոգիստիկական մոտեցումները և կառավարելով ձեռնարկության հիմնական լոգիստիկական ֆունկցիաները:
4.2	Կիրառել առաջավոր մեթոդներ՝ ձեռնարկությունը աշխատանքի վերլուծության, պլանավորման,

	կանխատեսումների և ֆինանսական հոսքերի կարգավորման համար:
<b>ՄԿ 5. Վերջնարդյունքներ</b> Տիրապետի ձեռնարկության հիմնական տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման մեթոդներին:	
5.1	Հիմնավորել ավտոտրանսպորտում տարիֆիկացիոն աշխատաքների համար ընտրված համակարգը:
5.2	Ընտրել ավտոտրանսպորտային ձեռնարկության օպտիմալ ապահովագրական համակարգ:
5.3	Ներդնել ինվեստիցիոն նախագծեր և բարձրացնել դրանց տնտեսական արդյունավետությունը տրանսպորտային գործունեության տարբեր ձևերի համար՝ գնահատելով դրանք:
5.4	Հաշվարկել մատակարարման շղթայի գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշները:
<b>6.1. Ուսումնական պլան (Հավելված 1)</b>	
<b>6.2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (Հավելված 2)</b>	
<b>6.3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (Հավելված 3)</b>	
<b>7. Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>	
<p>ՄԿԾ համար ուսուցման առաջնային մեթոդը <b>դասախոսություններն</b> են: Դասընթացների կազմակերպման համար օգտագործվում է առցանց Moodle ուսուցման հարթակ: Այն, գրքերից բացի, դասախոսներին հնարավորություն է տալիս լրացուցիչ նյութեր, դասախոսություններ կամ հոդվածներ տրամադրել ուսանողներին և միշտ տեղեկացնել նրանց կատարողականի մասին: Բացի դասախոսություններից՝ կատարվում են նաև <b>լաբորատոր և գործնական աշխատանքներ</b>: Ուսումնառումը կազմակերպվում է նաև <b>լսարանային քննարկումների, աշխատանքային փորձի ուսումնասիրությունների, խնդիրների լուծման, խմբային աշխատանքի և շնորհանդեսների միջոցով</b>:</p> <p>Բացի հիմնական դասընթացի նյութից՝ որոշ առարկաներ կարող են ուսուցանվել հրավիրված դասախոսների (ոլորտի մասնագետներ, փորձագետներ, բիզնես խորհրդատուներ կամ տվյալ ոլորտի քաղաքականություն մշակողներ):</p> <p>Դասախոսության ընթացքում կիրառվում են դասավանդման հետևյալ մեթոդները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մտադրոհ. յուրաքանչյուր թեմայի դասավանդումից առաջ կատարվում են հարցումներ թեմայի վերաբերյալ ուսանողների իմացության մակարդակը պարզաբանելու նպատակով:</li> <li>• Տեսական նյութի ներկայացում և բացատրություն. դասախոսը մանրամասն բացատրություններով ներկայացնում է նյութը: Կիրառվում են POWER POINT տարբերակով համակարգչային ցուցադրություն, պաստառներ, օգտագործվում է նաև գրատախտակը:</li> <li>• Տորմատիվ հարցումներ. նյութի ներկայացման ընթացքում պարբերաբար կատարվում են հարցումներ նյութի ընկալման մակարդակը պարզաբանելու համար: Հիմնականում հարցադրվում է. պա՞րզ է, հասկանալի՞ է:</li> <li>• Համառոտ միտք. թեման ավարտելուց հետո դասախոսը հանձնարարում է յուրացման աստիճանի պարզաբանման համար այն</li> </ul>	

ձևակերպել մեկ նախադասությամբ:

- Հարց ու պատասխան. դասի ավարտին դասախոսը պատասխանում է ուսանողների կողմից տրվող հարցերին:

Լաբորատոր-գործնական պարապմունքների անցկացման համար կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր, լաբորատոր սարքեր, փորձասարքեր, կառուցվածքների մոդելներ, մեթոդական ցուցումներ: Առարկայական ծրագրերի շրջանակներում ուսանողների կողմից մշտապես նախապատրաստվում են տեսական նյութի, կուրսային նախագծերի, լաբորատոր աշխատանքների և գործնական պարապմունքների վերաբերյալ քննարկվող թեմաներ, մշակվում և ներկայացվում են նախագծեր: Բակալավրի ուսանողները հնարավորություն են ստանում մասնակցել գիտաժողովների և ներգրավվել հետազոտական աշխատանքներին: Որպես ուսումնառության մեթոդներ՝ կատարվում են.

- ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում,
- ինքնուրույն, անհատական կամ խմբային աշխատանքներ,
- գործնական պարապմունքներ և լաբորատոր աշխատանքներ,
- կուրսային նախագծեր և աշխատանքներ,

Ուսանողները միաժամանակ մասնակցում են ուսումնական, արտադրական, շահագործական պրակտիկաներին և ուսանողական գիտաժողովներին, ներկայացնում հաշվետվություններ:

## 8. Գնահատման մեթոդները

ՄԿԾ շրջանակում մշտապես գնահատվում են ուսանողների ուսուցման արդյունքները և փնտրվում գնահատման նոր գործիքներ: Դասընթացների շրջանակում հիմնականում կիրառվում են գնահատման հետևյալ մեթոդները.

### Ուղղակի մեթոդներ

**Տնային աշխատանք/հանձնարարություններ:** պարբերաբար տրվում են գրեթե բոլոր դասընթացներից: Բոլոր տնային առաջադրանքներն ազնվության քաղաքականության սկզբունքով պետք է կատարվեն անհատապես: Ուսանողները կարող են օգնություն խնդրել միայն դասախոսից: Այդ նպատակով, բացի դասախոսություններից, անցկացվում են լաբորատոր-գործնական պարապմունքներ/էլ. ժամեր:

**Վիկտորինա:** Կիսամյակի ընթացքում գրեթե բոլոր դասընթացների շրջանակում կազմակերպվում են կարճ վիկտորինաներ: Դրանց նպատակն է խրախուսել ուսանողներին կարգալ դասի նյութը նախքան դասի գալը: Ըստ դասընթացի՝ դրանք կարող են կազմակերպվել յուրաքանչյուր դասի համար կամ կիսամյակի ընթացքում հաստատված ժամանակացույցով:

**Մասնակցություն/ակտիվություն:** Դասախոսը կարող է կանոնավոր կերպով հարցեր ուղղել ուսանողներին լսարանում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար ուսանողները ստանում են միավորներ: Առավելագույն միավորներ հավաքած ուսանողները կիսամյակի վերջում ստանում են բոնուս:

**Հաճախում:** Ուսանողները պետք է պատշաճ կերպով հաճախեն դասերին և ներկա գտնվեն դասի ամբողջ տևողության ընթացքում: Տուգանքից խուսափելու համար նրանք պետք է ներկայացնեն դասը բաց թողնելու հարգելի պատճառը՝ ոչ ուշ, քան բացակայության օրվանից երեք օր առաջ: Բացակայությունը հարգելի է համարվում, եթե ուսանողները ներկայացնում են բժշկի տեղեկանքը կամ դեկանատի նախնական հաստատումը: Նույնիսկ հարգելի բացակայության դեպքում ուսանողները պատասխանատվություն են կրում լսարանում կատարված առաջադրանքները լրացնելու և ուսումնառության նյութը յուրացնելու համար:

**Խմբային նախագծեր:** Ուսանողները խմբային նախագծեր են կատարում ըստ համապատասխան դասընթացների ծրագրերի:

**Անհատական աշխատանքներ (լսարանում):** Ուսանողներն անհատական աշխատանքներ են կատարում համապատասխան առարկաներից:

**Բանավոր շնորհանդեսներ:** Ուսանողները խմբային նախագծեր և (կամ) անհատական աշ-

խատանքներ են ներկայացնում տարբեր պարբերականությամբ՝ հիմնական, անհատական և խմբային: Գնահատումը կատարվում է ըստ շնորհանդեսի գնահատման ռուբրիկի:

**Միջանկյալ/եզրափակիչ քննություններ:** Ավարտական քննությունները համապարփակ են: Գրեթե բոլոր դասընթացների միջնաժամկետ և ավարտական քննությունները որպես միջոց են ուսանողների կատարողականը, պահանջվող հմտությունները և գիտելիքները ստուգելու համար:

Վերջնական գնահատականը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր պարամետրի համամասնությունների:

Փոխակերպման սանդղակով տրամադրված գնահատականները կիրառվում են ակադեմիական դասընթացների կատարողականի մակարդակը որոշելու համար: Դասընթացը գնահատվում է ըստ ստորև ներկայացված սանդղակի՝ ECTS գնահատման համակարգի հիման վրա:

Evaluation	Accumulated points, %	ECTS/ATC Grade	Course GP	ANAU Grade
Pass	90-100	A	4.0	5
	80-89	B	3.5	4
	70-79	C	3.0	4
	60-69	D	2.0	3
	50-59	E	1.0	3
Fail	0-49	F/FX*	0	2

### 9. Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան

Կրթական ծրագրի շրջանակում 7-րդ աշխատանքային կիսամյակում հիմնական մասնագիտական առարկաներից անցկացվում է 16 շաբաթ տևողությամբ արտադրական պրակտիկա:

Աշխատանքային կիսամյակը (արտադրական պրակտիկա) անցկացվում է «Երևան տրանս» ՓԲԸ-ում, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ում, «Սպայկա» ՍՊԸ-ում, «ՕՄՆԻ ԼՈՋԻՍՏԻԿՍ» ՍՊԸ-ում: Նշված կազմակերպությունների և ՀԱԱՀ-ի միջև կնքված են փոխհամագործակցության հուշագրեր:

Պրակտիկաների ավարտից հետո ուսանողները պետք է ներկայացնեն պրակտիկայի վերջնական հաշվետվություններ, որոնք արտացոլում են ընկերության գործունեությունը, ուսանողի դերն աշխատավայրում և ապագա զարգացմանն ուղղված առաջարկություններ:

**Ավարտական աշխատանք:** Ուսման ավարտին ուսանողները ներկայացնում են նախորդ դասընթացներից ստացած գիտելիքների և հմտությունների վրա հիմնված ավարտական աշխատանք, որի բանավոր ներկայացումն ուղեկցվում է շնորհանդեսով: Ավարտական աշխատանքը գնահատվում է հատուկ ստեղծված հանձնաժողովի կողմից, որի անդամները ոլորտի կամ աշխատաշուկայի ներկայացուցիչներ են: Ավարտական աշխատանքի գնահատման և բողոքարկման համար համալսարանում գործում են հատուկ մշակված ընթացակարգեր:

### 10. Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները

Կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած շրջանավարտների համար աշխատատեղ ունենալու լայն հնարավորություն են ընձեռում ՀԱԱՀ-ում պարբերաբար կազմակերպվող աշխատանքի տոնավաճառը և կարիերայի կենտրոնը: Շրջանավարտների մասնագիտական գործունեության օբյեկտներ են բեռների և ուղևորների փոխադրումներով զբաղվող պետական և սեփականության հիմունքներով գործող տրանսպորտային ձեռնարկություններն ու կազմակերպությունները, երթևեկության անվտանգության ծառայությունները, տրանսպորտային առաքչական ձեռնարկություններն ու կազմակերպությունները, պետական տրանսպորտային վերահսկողության տարածքային մարմինները, տրանսպորտային ծառայությունների շուկայի ուսումնասիրությամբ

զբաղվող մարկետինգային ծառայությունները, ապրանքաշրջանառությամբ և ուղևորափոխադրումներով զբաղվող տարածաշրջանային համակարգերը, արտադրական և սպառման համակարգերը, արտադրատեխնոլոգիական համակարգերի տեղեկատվական ապահովմամբ զբաղվող ձեռնարկություններն ու կազմակերպությունները:

«Տրանսպորտային համակարգեր» մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը կարող է կրթությունը շարունակել մագիստրատուրայում՝ ստանալով մագիստրոսի որակավորում:

**11. ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ**

Կրթական ծրագրի իրականացման համար առկա են համապատասխան տեխնիկական բազա՝ լաբորատորիաներ, տաղավարներ, սակայն, սակայն կարիք կա թարմացման և ժամանակակից սարքավորումների ձեռք բերման

**12. ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջները**

Սույն կրթական ծրագրի շրջանակում դասավանդում են համապատասխան բազային կրթությամբ դասախոսներ՝ պրոֆեսորներ, դոցենտներ, դասախոսներ և ասիստենտներ: Այդ նպատակով սահմանվում են վերջիններիս ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքային պարտականությունների շրջանակները:

Հիմք ընդունելով ՀԱԱՀ ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգը, ՄԿԾ-ում ներառված մասնագիտական և ընդհանուր մասնագիտական առարկաներ դասավանդող Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ամբիոնների ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի արդյունավետ կառուցվածքը՝ սահմանվում է.

- պրոֆեսորներ և դոցենտներ՝ 70 %,
- դասախոսներ և ասիստենտներ՝ 10 %,
- ոլորտային պրակտիկ փորձ ունեցող դասավանդողներ՝ 10 %,
- ուսումնաօժանդակ անձնակազմ՝ 10 %:

Ամբիոններում ապահովվում է նաև գործընկեր արտասահմանյան համալսարանների դասախոսների ներգրավվածությունը դասավանդման գործընթացում:

Պրոֆեսորադասախոսական կազմի և դասավանդողների մոտ մասնագիտական առանցքային կոմպետենցիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և օտար լեզուների կարողությունների կատարելագործման նպատակով սահմանվում է վերապատրաստումների ծրագիր: Նրանք ունեն գիտությունների թեկնածուի (դասավանդող դասախոսական կազմի 80 %-ը) և դոկտորի (10 %-ը) գիտական աստիճաններ, դոցենտի և պրոֆեսորի կոչումներ: Հնարավորության դեպքում ցանկալի է վերապատրաստման գործընթացը կազմակերպել արտերկրում, ինչը կնպաստի տեղական և արտասահմանյան դասավանդման մեթոդների համեմատմանը, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների ամրապնդմանն ու ընդլայնմանը: Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է տիրապետի համակարգչային ճարտարագիտական ծրագրերին:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 80 % համար ՀԱԱՀ-ը հիմնական աշխատավայրն է:

«Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրով մասնագիտական առարկաների դասախոսներն անցնում են վերապատրաստում հանրապետության բուհերում և ոլորտի առաջատար կազմակերպություններում՝ նոր դասընթացների ուսուցման, նորագույն տեխնոլոգիաների և ուսուցման նոր, ժամանակակից տեխնիկական միջոցների յուրացման համար:

**Գնահատման անուղղակի մեթոդներ**

**Պրակտիկայի գնահատում:** Պրակտիկայի ծրագրի ավարտին պրակտիկայի գնահատման ձև է տրվում տեղում պրակտիկայի ղեկավարներին՝ գնահատելու ուսանող-պրակտիկանտների կատարողականը՝ ընդհանուր տեխնիկական գիտելիքների և աշխատանքում հաջողության հասնելու համար անհրաժեշտ հմտությունների վերաբերյալ: Տվյալները վերլուծվում և հաղորդվում են պրակտիկայի ապագա ծրագրերի բարելավման նպատակով:

**Շրջանավարտների հարցումներ:** Սովորաբար կատարվում են ուսման արդյունքները և ուսանողների գոհունակությունը որոշելու համար: Յուրաքանչյուր զարնանային կիսամյակի ավարտին կատարվում են արդյունքների հետազոտություն և շրջանավարտների հարցումներ՝ կիսամյակային կտրվածքով ուսանողների ուսումնառության արդյունքներն ու գոհունակությունը որոշելու համար (որքանով է տվյալ ծրագիրը նպաստել նրանց զարգացմանը, որպեսզի նրանք հաջողակ լինեն իրենց մասնագիտական կարիերայում): Հարցումն անցկացվում է նաև ուսանողների կարիերայի և ապագա կրթական ծրագրերի, կրթական փորձից ընդհանուր գոհունակության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև կրթության որակի բարելավման և մեր ուսանողներին ավելի լավ ծառայելու նպատակով ծրագրի հիմնական ուժեղ և թույլ կողմերի մասին պատկերացում կազմելու համար:

**Գործատուների բավարարվածության հարցումներ:** Գործատուների գոհունակության հարցումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ՝ մեր շրջանավարտների հմտությունների, վերլուծական ունակությունների, գիտական և գործնական գիտելիքների, աշխատանքի պատրաստակամության առումով նրանց գոհունակությունը պարզելու համար: Այդ հարցումները նախատեսում են նաև բացահայտել աշխատաշուկայում անհրաժեշտ հմտությունները և որակավորումները: Կրթական ծրագիրը հավանության է արժանացել Ազրաբային ֆակուլտետին կից գործող արդյունաբերական խորհրդի կողմից:

**Ուսումնական ծրագրի վերանայում:** Ուսումնական ծրագիրը վերանայվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ արդյունավետությունը գնահատելու համար: Անհրաժեշտության դեպքում կատարվում են վերանայումներ՝ արդյունաբերության, ուսանողների կարիքներին և ծրագրի նպատակներին ծրագրի համապատասխանությունն ապահովելու համար: Առարկայական ծրագրերը վերանայվում են յուրաքանչյուր ուսումնական տարի. հիմք են ընդունվում գործատուների պահանջները, ոլորտի առաջընթացը:

Ծրագրի պատասխանատու	Ա.Մ.Եսոյան
Ֆակուլտետի ղեկան	Ա.Ռ.Սիմոնյան



**III Ուսումնական գործընթացի պլան**

h/h	առարկայի վրա ընկած ծածկագիրը	առարկայի անվանումը	Միջկետների թիվը	շաբաթաթվեր	ժամաժամանակը	ընդհանուր ժամաժամանակը	Որից (ժամ)			կրթության նախագիծ (աշխատանք) հաշվարկագրաֆիլակայան աշխատանք	անահատական և ինքնուրույն աշխատանք	ստուգման ձևը
							դասախոսություն	գործնական	լաբորատոր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
<b>1-ին տարի, 1-ին կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		Հայոց լեզու	2	2	32			32			28	քնն
2		Օտար լեզու /ռուսերեն/	4	4	64			64			56	քնն
3		Հայոց պատմություն	2	2	32	32					28	քնն
4		Բարձրագույն մաթեմատիկա -1	5	5	80	32	48				70	քնն
5		Կիրառական ինֆորմատիկա	5	5	80		80				70	քնն
6		Գրաֆիկայի հիմունքներ	5	5	80	32		48			70	քնն
7		Ֆիզիկա	6	6	96	48		48			84	քնն
		Ֆիզիկական կուլտուրա		2	32			32				
		<b>Ընդամենը 1-ին կիսամյակում</b>	<b>29</b>	<b>31</b>	<b>496</b>	<b>144</b>	<b>128</b>	<b>224</b>			<b>406</b>	
<b>1-ին տարի, 2-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		Հայոց լեզու և խոսքի մշակույթ	2	2	32			32			28	քնն
2		Նյութագիտություն	5	5	80	48		32			70	քնն

3		Օտար լեզու/անգլերեն,ֆրանսերեն, գերմաներեն/	8	8	128			128			112	քնն
4		Հասարագիտական առարկաների մոդուլներ/Հայոց պատմություն, Մշակութաբանություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն/	6	6	96	96					84	քնն
5		Բարձրագույն մաթեմատիկա -2	6	6	96	48	48				84	քնն
6		Ընդհանուր քիմիա	4	4	64	32		32			56	քնն
		Ֆիզիկական կուլտուրա		2	32			32				
		<b>Ընդամենը 2-րդ կիսամյակում</b>	<b>31</b>	<b>33</b>	<b>528</b>	<b>224</b>	<b>48</b>	<b>256</b>			<b>434</b>	
<b>2-րդ տարի, 3-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		Տեսական մեխանիկա	5	5	80	32	48				70	քնն
2		Համակարգչային գրաֆիկա	6	6	96			96			84	քնն
3		Ճան. երթ. կանոններ և մեկնաբանություն	4	4	64	32		32			56	քնն
4		Նյութերի դիմադրություն	6	6	96	48	32	16			84	քնն
5		Ավտոտրակտորային շարժիչներ	5	5	80	32		48			70	քնն
6		Ֆինանսական պատրաստվածություն	4	4	64	32	32				56	քնն
		<b>Ընդամենը 3-րդ կիսամյակում</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>480</b>	<b>176</b>	<b>112</b>	<b>192</b>			<b>420</b>	
<b>2-րդ տարի, 4-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		ԱՏՄ /կառուցվածք/	6	6	96			96			84	քնն
2		Ավտոմոբ. էկոլոգ. անվտանգ.և շրջ. միջ. պահպ	4	4	64	32		32			56	քնն

3		Լոգիստիկ համակարգեր	5	5	80	48	32				70	քնն
4		Էլեկտրոտեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ	5	5	80	48		32			70	քնն
5		Վիճակագրություն	5	5	80	32	48				70	քնն
6.		Ավտոմոբիլային ճանապարհներ	5	5	80	32	16	32			70	քնն
		<b>Ընդամենը 4-րդ կիսամյակում</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>480</b>	<b>192</b>	<b>96</b>	<b>192</b>			<b>420</b>	
<b>3-րդ տարի, 5-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		Թվային լոգիստիկա	4	4	64	32		32			56	քնն
2		Տրանսպորտային լոգիստիկայի հիմունքներ	4	4	64	32	32				56	քնն
3		ԱՏՄ շահագործական հատկանիշների գնահատում	6	6	96	48	32	16			84	քնն
4		Ճարտարագիտության հիմունքներ /Կիրառական մեխանիկա/	8	8	128	64	64				112	քնն
		Մոդուլ 1 ՄՄՏ	4	4	64	32	32				56	քնն
		Մոդուլ 2 ՄՄ	4	4	64	32	32				56	քնն
5		Կամընտրային	4	4	64	32	16	16			56	քնն
6		Կամընտրային	4	4	64	32	16	16			56	քնն
		<b>Կամընտրային առարկաներ</b>										
1		Տրանսպորտային բեռնային համալիրներ	4	4	64	32	16	16			56	քնն
2		Տրանսպորտային համակարգեր և մասնագիտացված շարժակազմ	4	4	64	32	16	16			56	քնն

3		Ավտոտրանսպորտային հոգեբանություն	4	4	64	32	16	16			56	քնն
4		ԱՏՄ կառուցվածքային անվտանգություն	4	4	64	32	16	16			56	քնն
		<b>Ընդամենը 5-րդ կիսամյակում</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>480</b>	<b>240</b>	<b>160</b>	<b>80</b>			<b>420</b>	
<b>3-րդ տարի, 6-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												
1		Ամբարձիչ փոխադր. և բ-բ մեքենաներ	6	6	96	48	32	16			84	քնն
2		Ճանապարհատրանսպ. պատ. փորձագիտություն	5	5	80	32	32	16			70	քնն
3		Վառելանյութեր և քսանյութեր	5	5	80	32	16	32			70	քնն
4		Ճանապարհ. երթևեկ. կազմ. և անվտանգ.	6	6	96	48	32	16			84	քնն
5		Կամրնտրային	4	4	64	32		32			56	քնն
6		Կամրնտրային	4	4	64	32		32			56	քնն
		<b>Կամրնտրային առարկաներ</b>										
<b>1</b>		Ավտոմոբիլների տեխ. շահագործում	4	4	64	32		32			56	քնն
2		Ճանապարհ. երթ. կառ. տեխն. միջոց. և համակարգեր	4	4	64	32		32			56	քնն
<b>3</b>		Բեռնագիտություն	4	4	64	32		32			56	քնն
4		Հիդրավլիկա և հիդրոպնևմատիկ հաղորդակներ	4	4	64	32		32			56	քնն
		<b>Ընդամենը 6-րդ կիսամյակում</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>480</b>	<b>224</b>	<b>112</b>	<b>144</b>			<b>420</b>	
<b>4-րդ տարի, 7-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 16</b>												

	Աշխատանքային կիսամյակ/Արտադրական պրակտիկա/											
	<b>Ընդամենը 7-րդ կիսամյակում</b>	<b>30</b>										
<b>4-րդ տարի, 8-րդ կիսամյակ, շաբաթների թիվը՝ 12</b>												
1	Ապահովագրական գործ	4	5	60	30	30				60	քնն	
2	Տրանսպորտի էկոնոմիկա	4	6	72	36	36				48	քնն	
3	Տրանսպորտայի փոխադրումներ	4	6	72	36	18	18			48	քնն	
4	Կենսագործունեության. անվտանգություն	4	5	60	30	18	12			60	քնն	
5	Կամընտրային	4	5	60	30	30				60	քնն	
	<b>Կամընտրային առարկաներ</b>											
1	Մաքսային լոգիստիկա	4	5	60	30	30				60	քնն	
2	Մեքենաների հուսալիություն. և նորոգում	4	5	60	30	30				60	քնն	
3	Տնտեսագիտական և մաթեմատիկական մեթոդներն ու մոդելները լոգիստիկայում	4	5	60	30	30				60	քնն	
4	Տրանսպորտային գործընթացի և լոգիստիկայի կառավարման հիմունքներ	4	5	60	30	30				60	քնն	
	<b>Ընդամենը 8-րդ կիսամյակում</b>	<b>20</b>	<b>27</b>	<b>324</b>	<b>162</b>	<b>132</b>	<b>30</b>			<b>276</b>		
	Ավարտական աշխատանքի պաշտպանություն	10										
	<b>Ընդամենը</b>	<b>240</b>	<b>211</b>	<b>3268</b>	<b>1362</b>	<b>788</b>	<b>1118</b>			<b>2796</b>		